**Գործ թիվ ԵԴ2/1330/02/26**
**Քաղվածք**

# ՎՃԻՌ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

20.03.2026թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ Դատարան), հետևյալ կազմով՝

*նախագահությամբ՝ դատավոր* Դ. ՕՀԱՆՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Ալֆա Լեգալ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01042899, պետական գրանցման համար՝ 264.1101256755, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Դավիթ Անհաղթ փողոց, շենք 6, 147) (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարություն (ՀՎՀՀ՝ 02522157, պետական գրանցման համար՝ 282.184.1114333, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նոր-Նորք Բագևանդի փողոց, շենք 5)՝ (այսուհետ՝ Նախարարություն) ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՇՁԲ-26-10/1 ծածկագրով փակ նպատակային մրցույթի նախաորակավորման ընթացակարգի հրավերը անվավեր ճանաչելու պահանջի մասին,

## ՎՃՌԵՑ

1. «Ալֆա Լեգալ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՇՁԲ-26-10/1 ծածկագրով փակ նպատակային մրցույթի նախաորակավորման ընթացակարգի հրավերը անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

**ԴԱՏԱՎՈՐ** **Դ. ՕՀԱՆՅԱՆ**